

տակի չի կարելի հասնել: այլ ընդհակառակն առիթ է լինում, որ ժողովուրդը կրէ անագին զրկանքներ: Ռուսաց կառավարութիւնն արդէն քանիցս իւր կարծիքն է յայտնել Մակեդոնիայի դործերի վերաբերմամբ. նա պահանջում է որ Սուլթանը իրադործէ այն բարենորոգումները, որոնք զանազան ժողովներով արդէն յիշուած և որոշուած են: Միւս պետութիւնները համաձայն են այդ առաջարկութեան և իրանք իրանց կողմից ևս աշխատում են ի կատար ածել:

ԿԼԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Փարիզում «Ս. Մարտինի» անունով մի ընկերութիւն է հիմնուում, որի նպատակն է կաթոլիկութիւնը կառավարութեան յարձակումների դէմ պաշտպանել: Նոր ընկերութեան կազմի մէջ մտնում են զանազան դասակարգի մարդիկ. իսկ հիմնադիրներն են կոմսուհիներ և կոմսեր:

«Ներքէք, ասում է „Figaro“ լրագիրը, կաթոլիկ եկեղեցու ձեռնարկող ոգին այնպէս ակնյայտնի չի երեացել, ինչպէս փորձութեան օրերում: Կոմպի ձեռք առած խիստ միջոցները հազարաւոր անձնուրաց կոյսերի դործից յետ ձգեցին: Ի՞նչ անեն այս աղջիկները: Ներկայումս նոքա իրենց հայրենական տունն են վերադարձել և աղքատութեան մէջ են: Շատ վանքերում հարկաւոր եղաւ մահճակալներ տւելացնել, որպէս զի աքսորեալ կոյսերի համար տեղ բացուի: Հարիւրաւոր քոյրեր հարկադրուած կացարան են խնդրում բարի մարդկանցից: Շատերին էլ բարի մարդիկ իրենք են հիւրասիրում: Որպէս զի աքսորեալ խեղճ կոյսերին օգնեն և միևնոյն ժամանակ կաթոլիկական շատ ձեռնարկութիւններ կորստից ազատեն, ընկերութեան հիմնադիր թէ կանայք և թէ տղամարդիկ սրտել են չինացել ոչ մի միջոց ուստի բեռնների և հալածուածների վիճակը թեթեւացնելու համար: Հոգեւոր իշխանութիւնների օգնութեամբ նոքա մտադիր են շատ բարեգործական հաստատութիւններ հիմնել, ուր տարազրեալ քոյրերը կարողանան իրենց առաքելութիւնը շարունակել: Իւրաքանչիւր համայնքում ընկերութիւնը մի կոյս է նշանակում՝ նորան յանձնելով հիւանդների և կարօտեալների հոգացողութիւնը: Եթէ սլ. Կոմպը, իւր շարութիւնը յամառութեամբ առաջ տանելով, այդպիսի կոյսերին անթոյլատրելի աղանդ համարէ, այն ժամանակ, ինչ արած, ընկերութիւնը կհրամայէ կոյսին—բոլոր հանել կրօնաւորական ոքեմը»:

Ֆրանսիայի բոլոր քաղաքներում և գիւղերում այդ ընկերութիւնը նոր ճիւղաւորութիւններ է ստեղծում, որպէս զի երիտասարդութեան սէրը դէպի եկեղեցին հաստատ պահէ: Ընդհանրապէս կոյսերին ամեն տեսակ հնարաւորութիւններ են տալիս. ինչպէս օրինակ, կոյսը իւր հետ շրջուն գրադարան ունի՝ լի կրօնական բովանդակութիւն ունեցող գրքերով, հաւակաթուղիական ուղղութիւնների դէմ մարտնչելու համար:

— Կաթոլիկութիւնը, չնայած հալածանքներին, մեծ գործունէութիւն է ցոյց տալիս Ֆրանսիայում: Շինուում են ամէն տեսակի ժողովարաններ՝ յատկապէս մատաղ սերնդի մէջ կղերական գաղափարներ տարածելու համար: Մատաղ սերունդը այս տեղերում ուսումնականին և նիւթականին վերաբերեալ յարմարութիւններ կգտնէ, այլ և մտերմական կապեր, պաշտպանութիւն, խորհուրդներ և այլն: Այսպիսով, ասում է „НОВОСТИ“-ն, կղերականներն իրենց ձեռքումն են պահում արիստոկրատ և բուրժուա դասակարգերը. իսկ ժողովրդի նկատմամբ բաւականանում են այն աղդեցութեամբ, որ ունին կաթոլիկ քահանաները ագէտ ամբօխի վերայ: Կաթոլիկութիւնն առաջ տանելու գլխաւոր միջոցը, ինչ խօսք, որ դպրոցն է: Հետեւեալ թուերը լաւ ապացոյց են, թէ դպրոցական գործը կղերականների ձեռքում ինչ յառաջադիմութիւն է արել: 1850 թ.-ին կրօնական կարգերը ունէին մանկական դպրոցներ 699, սկզբնական կրթութեան՝ 10,312. իսկ 1897 թ.-ին առաջին տեսակի դպրոցների թիւը հասնում է 3555-ի, իսկ երկրորդինը՝ 18,612-ի. թէև պէտք է ասել, որ վերջին տարիներում սկզբնական կրթութիւն տուող դպրոցների թիւը առհասարակ շատ է մեծացել: Այս էլ նկատենք, որ 1901 թ. յուլիսի 1-ին հրատարակուած օրէնքից յետոյ՝ կրօն. կարգերն առանց թոյլտուութիւն առնելու 3000-ից աւելի նոր դպրոցներ են բացել: Թէև դեռ լիակատար տեղեկագիր չկայ կղերականութեան ձեռքում սովորող աշակերտներ թուի մասին, բայց եղած թուերն էլ բաւական չափով պարզում են, թէ Ֆրանսիական կառավարութիւնը ինչու այդպիսի խիստ միջոցների դիմեց: Այսպէս օրինակ Աւելյոնում—կրօնաւորների դպրոցներում սովորում են 35,000 աշակերտներ, իսկ նոյն շրջանի աշխահական դպրոցներում՝ 9,000. կան աշխարհական դպրոցներ, ուր սովորում են երկու հոգի, յաճախ միայն ուսուցչուհու երեխաները, այն ինչ կրօնաւորների դպրոցները բերնէ բերան լի են:

Այս բոլորն ի նկատի առնելով՝ կարելի է հասկանալ Վալդ-դէլի—Ռուսսոյի այն խօսքերը, թէ քսան տարուց յետոյ էլ անկարելի կլինէր օրէնքներ հանել կղերականութեան և կրօնական կարգերի դէմ:

— Կրօնաւորական կարգերի դպրոցները դործը շարունակում է Ֆրանսիայում դեռ ևս մտքեր յուզել և զանազան խռովութիւններ առաջ բերել: Չնայելով հասարակ ժողովրդի կողմից եղած սաստիկ հակառակութեան, կառավարութիւնը՝ անշեղ իւր ուղղութիւնից, բուռն գործունէութեամբ առաջ է տանում իւր սկսած գործը, գորանով աւելի ևս իւր աւելացնելով կրակի վերայ: Այսպէս 22 եպիսկոպոս, որոնք մի թեմական հոգեւոր դպրանոց են պահպանում Լազարեան կրօնաւորների հրահրութեան տակ, նորերս ստացել են նախարարապետ Կոմպից պաշտօնական մի յայտագիր, ուր ի միջի այլոց ասուած է. «Հոգեւոր պաշտօնեաներ պատրաստելու գործը թոյլ է տրուում միմիայն Ս. Սիւլպիսի քահանաներին, և դորա համար էլ կառավարութիւնը արգելում է Լազարեաններին նրանց թեմական դպրոցում դաս աւանդելը: Ուստի պահանջուում է եպիսկոպոսներից, որ նոքա վերին խորհրդի նախագահին յայտնեն, թէ այս դէպքում ի՞նչ են մտադիր անելու»: Եպիսկոպոսների կողմից Անդրեւեանականների «Նաչ» լրագիրը ասում է. «Մենք չենք կարող առ այժմ ոչ հաստատել և ոչ էլ մերժել այս յայտարարութիւնը, բայց եթէ նա ճիշտ լինի, այն ժամանակ հետեանք կը լինի անխնայ հալածանք աշխարհիկ հոգեւորականութեան դէմ, և նշան Ֆրանսիայի կողմից, որ նա խանդարում է հոգեւորականութեան հետ բարձրագոյն թեմական դպրանոցների վերաբերմամբ կապած դաշնադրութիւնը»:

— Շատերին զարմացնում է Լեոն ԺԳ. պապի լուութիւնը Ֆրանսիայից կրօնական կարգերը հեռացնելու նկատմամբ, մինչև այժմ նա իւր կողմից ոչ մի միջոցի չդիմեց և կամ կաթոլիկ աշխարհին չըյայտնեց իւր կարծիքը: Այդ պատճառով զանազան շրջաններում և լրագրութեան մէջ սկսեցին անհանգստացուցիչ մտքեր տարածել: Սոցա հանգստացնելու համար պապական օրգան «Osservatore Romano» ամսագիրը մի առաջնորդող յօդուած է նուիրել ներկայ հարցին. բայց այդ յօդուածի մէջ նա այնպիսի եղանակով է խօսում, այնպիսի ոլորապտոյտ ճանապարհներով առաջ դնում, որ յօդուածը ներկայանում է իբրև դատարկ բառերի կուտակութիւն, առանց մտքի և առանց որ և է հանգստացուցիչ տեղեկութեան: Բուն խնդրի նկատմամբ ոչ մի միջիթարական բան չի ասում ընթերցողներին, բացի այն թէ Լեոն ԺԳ-ի ձայն չբարձրացնէն ամբողջ աշխարհի առաջ չի նշանակում, որ նա այդ գործը անորոշ վիճակի մէջ է թողել: Զարմանալին այն է, որ ամսագիրը փոխանակ բացատրելու, թէ ի՞նչպէս է վարուել Լեոն ԺԳ. այս հարցում, խօսում է այն

մասին, թէ ի՞նչպէս են համարձակուում կաթոլիկները քննադատութեան ենթարկել անսխալական պապի գործողութիւնը: Ամսագիրն անտեղի և անժամանակ է համարում եղած պահանջները, որովհետեւ տարրական քաղաքավարութիւնը պահանջում է, որ ըրոյրը յարգանքով վերաբերուեն նորա հեղինակութեան: Ամեն ոք պէտք է հասկանայ, որ եթէ խնդիրը վերաբերում է եկեղեցու բարձր շահերին՝ միայն պապը կարող է լինել իսկական հեղինակաւոր դատաւոր, նրան է միայն վայել ընտրել ժամանակը և յարմար միջոցը, թէ երբ և ի՞նչպէս պէտք է իւր ձայնը բարձրացնէ: Ով իրան իսկական կաթոլիկ է համարում, պէտք է սառնասրտութեամբ և յարգանքով լռութիւն պահպանէ՝ հաւատացած լինելով, որ պապը կառաջնորդէ դէպի անպայման օգտակարը. այս և սոյնանման գործերի հոգսը նախախնամութիւնը արդէն պապին է հաւատացել: Դժբախտաբար, շարունակում է ամսագիրը, այս ճշմարտութիւնը, ինչպէս և հարկաւոր յարգանքը, յաճախ մոռանում և ուշադրութեան չեն առնում, ո՛չ միայն նոքա, որոնք անուշադիր են թողնում պապի խօսքերը, այլ և նրանք, որոնք իրանց ցոյց են տալիս պապի խօսքերը ջերմեռանդութեամբ կատարող: Այսպէս ցաւալի կերպով ծագել և շարունակում է պապի լռութեան մասին անտեղի կռիւր: Վերջը ամսագիրը նոյն յանդիմանութիւնն է կարգում, ինչ որ Լեոն ԺԳ. պապը յաճախ կրկնում էր Ֆրանսիայի իւր կարծեցեալ հաւատարմագոյն ժողովրդին. «Ինչո՞ւ» հարցնում է ամսաթերթը, նկատելի չեղաւ ոչ այդ յամառ ցանկութիւնը և ոչ էլ այդ բոլան իղծը լսելու պապին այն ժամանակ, երբ նա ուղում էր Ֆրանսիայի իւր սիրեցեալ որդիներին ուղիղ ճանապարհի բերել. երբ նա խոստանում էր պաշտպանելու եկեղեցու բարձր շահերը, որոնց վնաս հասցնելուն համար այժմ նոքա գանգատւում են»: Ահա այս եղանակով, փոխանակ բացատրելու պապի լռութեան պատճառները, ամսագիրը դեռ շարունակում է յանդիմանութիւն կարգալ Ֆրանսիայի կաթոլիկներին և վարագուրել պապի լռութիւնը, թոյլ տալով որ թերթերը շարունակեն իրենց վէճը:

— «Բաղելեան յայտարարութեան» Հռովմի թղթակիցը յայտնում է, որ վերջին ժամանակներս թէ անհաշտ անդրեւնական հոգևորականութիւնը և թէ եւրոպայի ամէն կողմերում նորա ուղղութեան հետևող լրագրութիւնը առանձին եռանդով աշխատում են, որ կարողանան համողել արգելուած գրքերի ժողովին պրոֆ. Էրհարդի «Հռովմէական կաթոլիկութիւնը Թ. Դարում» յայտնի գրուածքը արգելուած գրքերի շարքն անդնել

և նորա տարածումն ամենուրեք արգելել: Շնորհիւ այն հանդամանքի, որ այդ գիրքը ահագին քանակութեամբ տարածուել է Գերմանիայի կաթոլիկ հոգեորականութեան մէջ և որ դորա հեղինակն ուսուցչապետ է Ֆրէյբուրգի կաթոլիկ աստուածաբանութեան համալսարանում, ուր նա ահագին յարգանք է վայելում հոգևոր պաշտօնի համար պատրաստուող ուսանողներին կողմից՝ այդ գիրքը դարձել է «ներկայ ժամանակի ամենափառանքաւոր գրութեանց մէկը»: Զի կարելի չնախատեսել, թէ ինչ կը լինի այդ շարժման հետեանքը, որովհետև Հռովմի կողմից որ և է մի աննպաստ վճիռ կարող է պապի և Գերմ. կայսեր բարեկամական յարաբերութիւնը խանգարել, որը ընդհանադառն լեռն ժ. ճգնում է պահպանել և շահադործել, չնայելով որ նա խիստ դժգոհ է կաթոլիկ Գերմ. համալսարաններում ուսանող երիտասարդութիւնից: Պէտք է աչքի առաջ ունենալ, որ պրոֆ. Էրհարդը շատ մեծ տհաճութիւններ է պատճառել Հռովմի աթոռին՝ իւր գրութեան մէջ անդրլեռնական խմբի շատ հայեացքները բողոքովին հերքելով: Պրոֆ. Էրհարդը յայտնում է, որ նա հաւատարիմ հպատակութեամբ ընդունում է պապին, ինչպէս քրիստոնէութեան մեծ ուսուցչի, բայց աւելացնում է՝ պապի իբրև ուսուցչի, հեղինակութիւնը «պէտք է սահմանափակուի միայն հռովմէական կաթոլիկ եկեղեցու դաւանութեան ուսուցմամբ, որը յերաւի զուտ եկեղեցական է»:

— Հոկտեմբերի 12-ին Օրլեանի նշանաւոր եպիսկոպոս Դիւպանլուի ծննդեան հարիւրամեայ տարեդարձի առթիւ ամէն կողմից հաւաքուել էին մեծ թուով եպիսկոպոսներ, որոնք խօսք բաց արին ի միջի այլոց Ֆրանսիայում իրենց համար ամենից հրատապ հարցի՝ վանական դպրոցների փակման մասին: Առաջին անգամ խօսեց Օտունի եպիսկոպոս կարդինալ Պերրոն, որին մեծ ցոյցերով և ուրախութեամբ ընդունեցին: Իւր այդ ճառով կարդինալը անխնայ յարձակուում էր ներկայ նախարարութեան վերայ, ու հալածանք է հանել միաբանութեան և դոցա դպրոցներին դէմ, չքաշուեց մինչև անգամ անուանելու նորան «անբարոյականացնող նախարարութիւն»: Ժողովուած եպիսկոպոսները հէնց այդտեղ կազմեցին մի յայտագիր յանուն կառավարութեան խորհրդարանին, բողոքելով նորա ընթացքի և եկեղեցական գործերում խառնուելու դէմ: Թէև այդ թղթի մէջ նորա յօդուա հանրապետութեան են խօսում, բայց միևնոյն ժամանակ բողոքում են միաբանութիւնների կողմից և պահանջում են սոցա համար ազատութեան նոյն իրաւունքները, ինչ որ վայելում են միւս քաղաքացիները. յայտնելով, որ եթէ

կառավարութիւնը համաձայնութեան դար Հռովմի հետ՝ որոշելու միաբանութիւններն դրութիւնը ֆրանսիայում, այն ժամանակ բոլոր խռովութիւնները կը դադարէին: Այս յայտադրին ստորագրել են 74 եպիսկոպոս, և հրաժարուել են ստորագրելուց միայն վեցը: Թէ ինչով պիտի բացատրել վերջինների արարքը, դժուար է ասել. շատ կարելի է դադարաւորով նորա համաձայն չեն մեծամասնութեան կարծիքին և չեն ճանաչում կրօնաւորներին իբրև եկեղեցու անբաժան մասը. դուք է և չեն ստորագրել նորա համար, որ վախեցել են, թէ կառավարութիւնը կը զրկէ իրանց նիւթական միջոցները: Կառավարութիւնը բանի տեղ չգրաւ եպիսկոպոսների բողոքը, և մինչև իսկ Բըղանսոնի առաջնորդին, որ ժողովել էր ստորագրութիւնները, և կարգինալ Պեքրոյին, որ իւր ճառով յանդիմանութիւն էր կարգացել նախարարութեանը, զրկեց ռճիկից. վերջինս ստանում էր տարեկան 10,000 ֆրանկ: Այսպիսի զրկանք ի հարկէ կարող էր երկեւղ աղդէլ ֆրանսիայի լաւ կեանք սիրող ու փորձող եպիսկոպոսներին, և կարելի է դարմանալ, որ չստորագրողները վեց հոգի են եղել, և ոչ աւելի . . :

— Լեոն ԺԳ.-ի յիսնամեայ կարգինալութեան յօրեկեանը վառաւոր կերպով կատարելու համար կազմուած Հռովմի կենտրոնական ժողովը մի շրջաբերական է ուղարկել զանազան կողմեր, ուր ի միջի այլոց ասում է. «Աղօթէ՛նք ամենաբարձրեալին՝ դեռ երկար տարիներ պահպանէ նորան, որ հայրերից ամենասիրաւատն է, որ միայն մտածում է իւր դաւակներն բարիքների համար, որ միայն ցանկանում է բազմացնել բարեգործութիւնը, ձգտում է պահպանել ընդհանուր խաղաղութիւնը և բուռն կերպով հետևում է ճշմարտութեան յաղթանակին»:

— Վերջին ժամանակներս Լեոն ԺԳ. պապը առանձին հոգածութիւն է ցոյց տալիս Աստուածաշնչի գիտութիւնը բարձրացնելու կաթոլիկ աշխարհում: Այդ նպատակով նա դիմումն է արել Հռովմէական կաթոլիկ հոգեւորականութեան մի առանձին առաքելական գրութեամբ, որպէս զի մի «Աստուածաշնչական մասնաժողով» կազմուի և միջոցներ ձեռնարկէ Աստուածաշնչի գիտութիւնը տարածելու: Այդ առաքելական թուղթը տպուել է կաթոլիկ լրագիրներում, ուր ի միջի այլոց ասում է պապը. «Մասնաժողովի անդամները պէտք է առանց արհամարհանքի հետաքրքրուեն և իմանան Աստուածաշունչ մատեանի վերաբերեալ նորագոյն գիտնականների բոլոր գիտելն ու մտքի արդիւնքը: Բացի դորանից, եթէ Աստուածաշնչի մեկնաբանութիւնը թոյլ է տալիս և յայտնի կացուցանում որ և է օգտա-

կար բան, առանց յետաձգելու պէտք է իւրացնեն և գրուածքներն միջոցով ընդհանուրին մատչելի դարձնեն: Այս նպատակով նորա մեծ ջանասիրութեամբ պէտք է ուսումնասիրեն լեզուագիտութիւնը և դորանից կախում ունեցող գիտութիւնները և իրանց կողմից էլ օգնեն զարգացնելու: Բայց որովհետեւ հէնց այստեղից են յարձակումներ ծագում ընդդէմ Ս. Գրքի, ուստի հէնց այստեղ պէտք է որոնեն նորան պաշտպանելու ղէնքերը, որպէս զի ճշմարտութեան և մոլորութեան միջի եղած կռիւը հաւասար չիլին: Հարկաւոր է հոգ տանել, որ արեւելեան լեզուներն և հին ձեռագրերն ուսումնասիրութիւնը մեզ մօտ աւելի պահաս յարգանքով չկատարուի, քան մեր հաղառակորդներն, որովհետեւ այդ երկու գիտութիւնները մեծ կարեւորութիւն ունեն: Ապա թո՛ղ մասնաժողովի անդամներն իրանց բոլոր ոյժը դործագրեն Աստուածաշունչ գրքերն հեղինակութիւնը անմատչելի դարձնելու. նորա պիտի աշխատեն թոյլ չտալ կաթոլիկներն մէջ տարածելու այնպիսի անյարմար կարծիքներ և տեսութիւններ, որ առանձին յաջողութեամբ դործ է ածում ոչ ճշմարիտ քննադատութիւնը, կարծես թէ Ս. Գրքի իսկական իմաստը պէտք չիկէր ամէնից առաջ արտաքին գիտութեան դործակցութեան մէջ որոնել: Զէ՛ որ ո՛չ մի իսկական կաթոլիկ չէ կարող կասկածել այն ճշմարտութեան դէմ, որ մենք կրկնել ենք մի այլ տեղ—Աստուած Ս. Գրքը չէ ներկայացրել գիտնականներն մասնաւոր դատաստանին, այլ նորա բացատրութիւնը յանձնել է ուսուցանող եկեղեցուն: Հետեապէս չպիտի թոյլ տալ քննադատելու Ս. Գրքը հաղառակ ո. հայրերն յայտնած աւետարանական մտքերին»:

Այս մասնաժողովի անդամներ են հաստատուած ի միջի այլոց նաև Պարբօհի, Վիլէն, Լաբրանթ՝ խմբագիր «Revue Biblique» թերթին, յայտնի գրող, Ս. Գրքի մասնագէտ Վիգուրն, որ մի քանի համալսարաններն ուսուցչապետ է: Մասնաժողովի քարտուղարն է հայր Ֆլէմինգը: Սոցա հեռ են նաև Ս. Գրքի մասին զանազան շարադրութիւններով յայտնի գրողներ, ինչպէս Բուանի առաջնորդ Ֆուարը, որն շարադրութիւնը՝ «Պօղոս առաքելի» և «քրիստոնէութեան սկզբնաւորութեան» մասին, շատ բարձր է գնահատում կաթոլիկ աշխարհում: Մի խօսքով, ինչպէս երեւում է, պատը ձգտում է վերացնել այն նախատինքը կաթոլիկ գիտութեան վրայից, որով մեղադրում են, թէ նա յետ է մնացել Աստուածաշնչի ուսումնասիրութեան մէջ: Մնում է միայն ուսասել, թէ որչափ իրականութիւն կդնեն նորա ձգտումները: Զի կարելի սակայն մերժել, որ վերջին ժա-

ժանտիկներս ատառձաժ արանակիսն ուսումը յառաջագիժմութիւն է անում հաթողիկ. դիտութեան մէջ: Ամենամեծ ապացոյցը դորան կարող է ծառայել Վիգուրու նշանաւոր բառարանը, որը մինչեւ այժմ հասցրած է շատուն. մի այնպիսի բառարան է սա, որը ամենայն վստահութեամբ կարող է մըցել բողոքական աստուածաշնչական դիտութեան ամեյլաւ բառարաններէ հետ:

— „Eclair“ -ը պատմում է, թէ ինչո՞ւ Զօլան պապին չտեսաւ:

Երբ Զօլան «Հռովմ» վէպն էր գրում, իւր բոլոր ընկերներին դիմում էր այս հարցով. «Նս կարո՞ղ եմ պապին տեսնել»: Էդմոն Գօնկուր մատնանիչ է անում իւր ազգական Լեֆեռու դը Քեկենի վրայ, որ առաջ Վատիկանում դեսպան էր՝ երեւի ոչ այնքան Զօլային ծառայութիւն մատուցանելու, որչափ Լեֆեռուի գլխին օյին դալու համար: Դեսպանը կաշուից դուրս է գալիս, երբ ստանում է Գօնկուրի այն նամակը, որով սա խնդրում է աշխատել, որ պապը Զօլային ունկնդրութիւն չնորհէ: Այն ժամանակ դեսպանը գնում է պապի քարտուղարի մօտ և նորան պատմում իւր դժուարութիւնները: Կարդինալն առում է, որ ինքը պատրաստ է ամէն բան իւր վերան առնելու, և Գօնկուրին էլ մի քաղցր պատասխան է ուղարկում, թէ պապը չի կարող ընդունել այն հեղինակին, որի գրուածքները եկեղեցին մերժում է:

Զօլան, որ Փարիզում նստած պատասխանի էր սպասում, դիմում է անում մի «չէզոր անձնաւորութեան» և նորա միջամտութիւնը խնդրում:

Շուտով կարդինալ X...-ը, որ ազգեցիկ մարդ էր և Ֆրանսիային ու Ֆրանսիական գրականութեան լաւ ծանօթ, որ ամէն օր տեսնում էր պապին՝ մի նամակ է ստանում Ֆրանսիայից և պատասխան գրում հետեւեալ կերպով. «Նս գեռ նոր վերադարձայ Նորին Սրբութեան մօտ ունեցած ունկնդրութիւնից և համոզուեցի, որ Ս. Հօրը ձեր գրած գործի մասին ոչ ոք բան չի ասել: Կարծում եմ, որ Նորին Սրբութիւնը մեծ հետաքրքրութեամբ կ'սօսի մի այնպիսի նշանաւոր մարդու հետ, որպիսին Զօլան է, եթէ անհրաժեշտ բոլոր ձեականութիւնները կատարուին: Ասպը միայն կտորներ է կարդացել ռէալական շիօլայի առաջնորդի գրուածքներից: Բարե՛ եղէք և ուղարկեցէք ինձ նուրաւ շարադրութիւններից յաջող հատընտիրներ, բայց ժամանակից առաջ ոչինչ չասէք նշանաւոր գրողին, որպէս զի նա էլ անյաջողութեան դէպքում չը հիատթափուի: Կարդինալին ուղարկուեց Զօլայի ոտանաւորների ժողովածուն, ուր մայր տա-

ճարի նկարագրութիւնն է անո՞ւմ, և նա հետն առած գնում է պապի մօտ: Այս տեղ նոցա մէջ սկսուեց հետեւեալ խօսակցութիւնը:

— Զերդ Սրբութեանը յայտնի է, որ Հռովմ է դալու նշանաւոր Զօլան, որը մի գիրք է գրում և այդ գրքի մէջ գլխաւոր անձնաւորութիւնը պապն է լինելու:

— Եկեղեցին, որ Դանտէին թոյլ տուեց դժոխքի մասին գրելու, հարող է թոյլ տալ, որ Վատիկանի մասին էլ գրեն:

— Ի հարկէ. բայց Հռովմը—պապն է, իսկ Զօլան չի կարող պապին տեսնել:

— Տարօրինակ կլինէր, եթէ ես ընդունէի մի մարդու, որը ստեղծագործութիւնները եկեղեցին դատապարտում է: Դուք գիտէ՞ք, այսքան նշանակութիւն ունեցողն ի՞նչ մարդ է:

— Ճշմարիտ է, նորա ստեղծագործութիւնների մէջ կան այնպիսի բաներ, որ արժանի են դատապարտութեան, բայց կան եւ գեղեցիկ ոսանաւորներ:

— Ոտանաւորներ. Զօլան ոտանաւորներ է գրում: Դուք համոզուած էք այդ բանին, սիրելի կարդինալ:

— Ահա նոցանից մի քանիսը տպուած են:

Եւ կարդինալը կարգաց մի քանի պարբերութիւններ Զօլայի „Genese“ վիպական շարագրութիւնից, որը գրել է նա բաւական ժամանակ առաջ, աղքատութեան մէջ:

— Նա գրել է այսպիսի սիրո՞ւն ոտանաւորներ՝ գտնուելով խեղճութեան մէջ. շատ լաւ է, նկատեց պապը:

Այն ժամանակ սիրտ առած, կարդինալը կարգաց մի ամբողջ շարք ոտանաւորներ և փակեց ընթերցումը հետեւեալ տողերով.

„Mais le dieu de bonté, le Seigneur notre, doit sourire, en voyant deux enfants s'adorer“ Պապը երկար ժամանակ նայում էր գրքի և Զօլայի պատկերի վերայ. վերջապէս ասաց.

— Հռովմը դեռ ինքը պապն է, և Զօլան եթէ պապին չը տեսնէ՝ ոչինչ չի գրի: Պապը գիշեր և ցերեկ նորա մասին էր մտածում, թէ կարող է արդեօք ընդունել բանաստեղծին՝ ընդունած լինելով միաժամանակ և վիպասանին, և վճռում է ընդունել Զօլային ու նորա կնոջը:

Կարդինալն այս բանը Փարիզ է յայտնում: Իմանում է և դեսպանը, որ իւր լրտեսի ձեռքով Զօլայի մասին գովասանական յօդուածներ է ուղարկում աղատամիտ լրագիրներին: Երբ Զօլան Հռովմ է գալիս՝ նորան օղակի պէս շրջապատում են կարճըրդեանները և ֆրանսիացիները, այնպէս որ Զօլան էլ չէր կարող պապի մօտ ուղնդութիւն ունենալ:

Սակայն այս տեղեկութեան հակառակ կան ուրիշ հաստատադրելից ստացուած լուրեր, որոնց համեմատ պապը երբեք ցանկութիւն չի ունեցել Զօլային տեսնելու, որը իւր «Լուրդ» վէպի լոյս տեսնելուց յետոյ յաճախ Հռոմ մէք գալիս. իսկ միւս կողմից, Զօլան չէր կարող պապին տեսնել՝ մինչև որ հնազանդութեան երդում չտար և չհրաժարուէր «Լուրդ»-ի մէջ ասածներէց։ Այս բանը անողը չէր Զօլան։ Այսպիսով, որպէս հերետիկոս, նա չէր կարող յուսալ, թէ կաթոլիկութեան գլուխն իրեն կընդունէ։

ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Դեկտեմբեր 10/25-ին Վախճանուեց Անգլիական եկեղեցու գլուխ, Կետրըրըրի արքեպիսկոպոս, դր. Տէմպլը։ Նա ծնուած էր 1821 թ.-ին. սկզբում դպրոցական գործին ծառայելով՝ 1858 թ.-ին Ռէօգբէյի համալսարանը ուսուցչանոցի տեսուչ էր կարգուել։ Գլադստոնի գաղափարների հետևող և պաշտպան լինելով՝ նորա օգնութեամբ 1869 թ. Էքստէրի եպիսկոպոս դարձաւ։ Թէպէտ նա շատ հակառակորդներ ունէր, բայց իւր անսովոր եռանդի և աննկուն աշխատասիրութեան շնորհիւ կարողացաւ հետզհետէ բոլորի յարգանքը վաստակել և այդպէս 1885 թ. Լոնդոնի եպիսկոպոսութեան, 1896-ին Կենտրըրըրի արքեպիսկոպոսութեան աթոռը բարձրանալ։ Լինելով խիստ հմուտ դրպրոցական գործին՝ նա մեծ ազդեցութիւն է ունեցել Անգլիոյ ներկայ դպրոցական օրէնսդրութեան հրատարակութեան վերայ. այլ և առանձնապէս նպաստել է ողջախոհութեան գործի և արբեցութեան դէմ եղած ջանքերի շարանալուն։

— Անգլիական եկեղեցին նորերումս զրկուել է նաև իւր մի ամենայայտնի ներկայացուցչից, այն է Քենտրըրըրի կանոնիկոս նշանաւոր դիտնական պատմաբան Զորջ Րոլինսոնից։ Նորան ամէնքը մեծ յարգանքով էին վերաբերում, որովհետև վերին աստիճանի համակրելի անձնաւորութիւն էր և ունէր շատ հաստատուն գաղափարներ ու ձգտումներ։ Նա եռանդուն մասնակցութիւն էր ցոյց տալիս այսպէս կոչուած «Շարժուն գաշնադրութեան» գործին և մինչև վերջն էլ հաւատարիմ մնաց այդ ուղղութեան։ Լինելով այսպէս նշանաւոր եկեղեցական գործիչ, նա միևնոյն ժամանակ Անգլիայի ամենայայտնի պատմագիրներից մէկն էր. նորա շատ գրուածքները մեծ չափով տարածուած են և յայտնի են ոչ միայն անգլիական գիտնական աշխարհում, այլ և Անգլիայից դուրս։ Այս կողմից նշանաւոր է մանաւանդ նորա «Արևելեան աշխարհի եօթը մեծ պետութիւն»